ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

17 փետրվարի 2021 թվականի թիվ 44 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019-2020ԹԹ. ՀՏՋՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով՝

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում 2019-2020թթ. ՀՏՋՀ-ի կողմից կառուցված ջրամատակարարման համակարգի շահագործման հանձնման գործընթացում առկա խնդիրների ուսումնասիրության նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Տիգրան Մուշեղյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար

անդամներ՝

Աղաբեկ Գալստյան - մարզպետարանի տեղեկան ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Միքայել Ղալումյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Ալեքսանդր Ոսկանյան - ՀՏՋՀ-ի փորձաքննության և վերլուծության խմբի ինժեներ
Սեյրան Սարիբեկյան - Սարիգյուղ համայնքի ղեկավար

2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել՝
- նախագծային կազմակերպության ներկայացուցչին
- շինարարական կազմակերպության ներկայացուցչին
- տեխ. հսկողությունն իրականացնող պատասխանատուին:

3. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել փորձագետների կարգավիճակով այլ մասնակիցների:
4. Ուսումնասիրել, 20-օրյա ժամկետում ներկայացնել եզրակացություն ջրամատակարարման համակարգի շահագործման հանձնման գործընթացում առկա խնդիրների, ինչպես նաև առաջարկություններ հնարավոր լուծումների վերաբերյալ:

Մարզպետ Հայկ Չոբանյան

18.02.2021

X

17 փետրվարի 2021թ.
ք. Իջևան